

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆԻՍ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սեպական համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարթում ենք հաջողություն:

**1** Որո՞նք են ժամտախտի հարուցիչները.

- 1) նախակենդանիները
- 2) բակտերիաները
- 3) վիրուսները
- 4) սնկերը

**2** Ինչի՞ց են ստանում պենիցիլին դեղամիջոցը.

- 1) մրիկասնկից
- 2) մուկորից
- 3) վրձնասնկից
- 4) խմորասնկից

**3** Անատամի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) եռաշերտ խեցու միջին շերտը ճենապակյա է
- 2) ունի ճառագայթային համաշվություն
- 3) շնչում է բոքով
- 4) ունի փակ արյունատար համակարգ

**4** Թվարկվող կաթնասուններից որի՞ն է քնորոշ կոյանոցի առկայությունը.

- 1) երիդնային
- 2) կենգուրուին
- 3) պարկավոր սկյուռին
- 4) պարկավոր խլուրդին

**5** Ի՞նչ դեր ունի ողնուցը թոշունի կյանքում.

- 1) թոիչքի պահին պաշտպանում է քամուց
- 2) ամրանում են թոիչքն ապահովող կրծքամկանները
- 3) մեծացնում է կմախքի շարժունությունը
- 4) իրանի հուսալի հենարան է

6

Ինչպե՞ս է ձկան ողնաշարը միացած զանգին.

- 1) կիսաշարժում՝ մեկ պարանոցային ողով
- 2) կիսաշարժում՝ երկու պարանոցային ողերով
- 3) շարժում՝ երկու պարանոցային ողերով
- 4) անշարժ

7

Ո՞ր զգայարանից են նյարդային ազդակները հասնում մարդու մեծ կիսագնդերի կեղևի ծոծրակային բիլք.

- 1) լսողական
- 2) հոտառության
- 3) տեսողական
- 4) մաշկամկանային

8

Լեղին մարդու օրգանիզմում ո՞ր գործառույթն է իրականացնում.

- 1) գլխոզենի սինթեզի ճնշում
- 2) ճարպերի ֆերմենտային ճեղքում
- 3) նեխման գործընթացների արգելակում
- 4) լիպազների ակտիվության ճնշում

9

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.

- 1) մաշկի արյան անորթները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմատվությունը մեծանում է
- 2) նեղանում են մաշկի մազանորթների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմատվությունը
- 3) աճում է արյան հոսքը դեպի մաշկ, իսկ մարմնի ջերմատվությունը նվազում է
- 4) լայնանում են մաշկի արյան անորթները, և մեծանում է այնտեղ մղվող արյան քանակը

10

Ո՞ր պնդումն է ճիշտ հակամարմինների վերաբերյալ.

- 1) իրենցից ներկայացնում են թափառող բջիջներ
- 2) կատարում են ֆագոցիտող
- 3) վնասագերծում են օտարածին նյութերը
- 4) յուրաքանչյուր հակամարմին կարող է ազդել տարբեր հակածինների վրա

11

**Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B<sub>1</sub> վիտամինի անբավարարության դեպքում.**

- 1) սակավարյունություն
- 2) կոպերի ներքին մակերևույթի բորբոքում
- 3) հակամարմինների առաջացման խանգարում
- 4) քնի, հիշողության և ուշադրության խանգարում

12

**Ի՞նչն է բնորոշ պայմանական ռեֆլեքսներին.**

- 1) կենտրոնները գտնվում են վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցներում
- 2) առաջանում են երկու ոչ պայմանական գոգոխների զուգակցումից
- 3) անհատական են, առաջանում են ոչ պայմանական և անտարբեր գոգոխների զուգակցումներից, կարող են արգելակվել
- 4) անհատական են, չեն արգելակվում

13

**Ո՞ր հորմոնի անբավարար քանակն է մանկական հասակում մարդու մոտ առաջացնում գաճաճություն հիվանդությունը.**

- 1) գլյուկագոնի
- 2) աղբենալինի
- 3) ածի հորմոնի
- 4) թիրօքսինի

14

**Նշվածներից ո՞ր պնդումն է ճիշտ մարդու կոկորդի վերաբերյալ.**

- 1) ձայնախորշը խոսելու պահին լայնանում է
- 2) կոկորդը գտնվում է շնչափողի և բրոնխների միջև
- 3) կոկորդի մուտքը փակվում է մակոկորդի աճառով
- 4) կոկորդի ամենալայն մասում ձգվում են ձայնալարերը

15

**Ինչպիսի՞ միջավայրում է ակտիվ պեպսին ֆերմենտը.**

- 1) ուժեղ հիմնային
- 2) քույլ հիմնային
- 3) քրվային
- 4) չեղոք

16

**Նշված առանձնահատկություններից ի՞նչն է մազանոթներում արյան հոսքի արագության նվազման պատճառ.**

- 1) արյան հոսքի արագությունը երակներում աստիճանաբար մեծանում է
- 2) երակների լուսանցքների ընդհանուր գումարային մակերեսը փոքր է, քան մազանոթներինը
- 3) մազանոթների պատերը բավանցելի են պլազմայի որոշ բաղադրիչների համար
- 4) մազանոթների լուսանցքի գումարային մակերեսը 500-600 անգամ գերազանցում է առրտայի լուսանցքի մակերեսին

17

**Հետևյալ վիրուսներից ո՞րը չի դասվում ֆազերի շարքին.**

- 1) ԶԻԱՀ-ի վիրուսը
- 2) սիֆիլիսի հարուցչի վիրուսը
- 3) խոլերայի հարուցչի վիրուսը
- 4) բոքախսի հարուցչի վիրուսը

18

**Կապտականաչ ջրիմուտների քլորոֆիլը և այլ գունակները գտնվում են.**

- 1) քլորոպլաստներում
- 2) ուղղակի ցիտոպլազմայում
- 3) միտոքոնդրիումներում
- 4) Գոլցիի ապարատում

19

**Ի՞նչ է նշանակում գենետիկական կողի ավելցուկայնություն.**

- 1) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները գաղտնագրում են նույն ամինաթթուն
- 2) յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 3) գեների միջև կան «ընդհատումներ»
- 4) միևնույն ամինաթթուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով

20

**Ո՞ր բակտերիաներն են օգտագործում ազոտային թքուն ազոտականի օքսիդացնելու ժամանակ անցատվող էներգիան.**

- 1) ազոտ ֆիբոտ
- 2) նիտրիֆիկացնող
- 3) ամոնիֆիկացնող
- 4) դենիտրիֆիկացնող

21

Ինչպե՞ս են միմյանց միանում նուկլեոտիդներն ի-ՈՒԹ-ի մոլեկուլում.

- 1) մեկ նուկլեոտիդի ազոտական հիմքի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով
- 2) մեկ նուկլեոտիդի ազոտական հիմքի և հարևան նուկլեոտիդի ածխաջրի միջոցով
- 3) հարևան նուկլեոտիդների ազոտական հիմքերի միջոցով
- 4) մեկ նուկլեոտիդի ածխաջրի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով

22

Որտե՞ղ են սինթեզվում առլիսախարիդները ճեղքավորող ֆերմենտները.

- 1) հատիկավոր էնդոպլազմային ցանցի վրա
- 2) ողորկ էնդոպլազմային ցանցի վրա
- 3) պերօքսիստներում
- 4) լիզոսումներում

23

Ի՞նչ է տեղի ունենում դիպլոիդ բջջի մեյոտիկ բաժանման ժամանակ.

- 1) առաջանում են երկու հապլոիդ բջիջներ
- 2) առաջանում են երկու դիպլոիդ բջիջներ
- 3) առաջանում են չորս հապլոիդ բջիջներ
- 4) առաջանում են չորս դիպլոիդ բջիջներ

24

Կրկնակի բեղմնավորման ժամանակ ի՞նչ է առաջանում վարսանդի սերմնարանի պատից.

- 1) սերմնամաշկ
- 2) պտուղ
- 3) պտղապատ
- 4) սերմ

25

Ո՞ր ժամանակահատվածում է յուրաքանչյուր քրոմոտ կրում երկու քրոմատիդ.

- 1) անաֆազից մինչև ինտերֆազի S փուլը
- 2) ինտերֆազի G<sub>1</sub> փուլից մինչև թելոֆազ
- 3) ինտերֆազի սկզբից մինչև այռֆազ
- 4) այռֆազում և մետաֆազում

26

Ո՞ր պնդումն է ճիշտ սողունների և քոչունների սաղմնային զարգացման գաստրոլացման փուլի վերաբերյալ.

- 1) անիմալ քևեռի բջիջները սողում են դեպի վեգետատիվ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են երկշերտ սաղմը
- 2) սաղմնային սկավառակը ճեղքում է երկու թերթիկի. արտաքին՝ էկտոդերմի և ներքին՝ էնտոդերմի
- 3) երկշերտ սաղմն առաջանում է բլաստոլի պատի ներփքումով բլաստոլի խոռոչի մեջ
- 4) վեգետատիվ քևեռի բջիջները սողում են դեպի անիմալ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են էնտոդերմը

27

Որքա՞ն է ոլորի սերմերի կանաչ գույնը և կնճռոտ մակերևույթը պայմանավորող գենոտիպերի առավելագույն քիվը.

- 1) 1
- 2) 3
- 3) 4
- 4) 9

28

Ո՞ր պնդումն է սխալ մեղուների վերաբերյալ.

- 1) մեղուների օրգանիզմում սեռական քրոմոսոմներ չկան
- 2) մեղուների էգերի բոլոր բջիջները ունեն քրոմոսոմների դիպլոիդ հավաք
- 3) մեղուների արուները զարգանում են կուսածնությամբ և ունեն քրոմոսոմների հապլոիդ հավաք
- 4) մեղուների սպերմատոզոդների զարգացումն ընթանում է մեյօզով

29

Ո՞ր գենոտիպերի դեպքում է երկու ալելով էլ ոչ լրիվ դրմինանոտության ժամանակ երկիրքիդ խաչասերումից հետո սերնդում ստացվում միակերպություն՝ ըստ ֆենոտիպի.

- 1) AABb և AABb
- 2) AABB և aabb
- 3) AaBb և AaBb
- 4) AaBb և AAbb

30

Ո՞ր հիվանդության դեպքում է տղամարդկանց մոտ առկա հավելյալ X քրոմոսոմ.

- 1) ալբինիզմ
- 2) «մլավոցի սինդրոմ»
- 3) Քլայնֆելտերի սինդրոմ
- 4) Շերեշևսկու և Թերների սինդրոմ

31

Ինչպիսի՞ գենոտիպեր կունենան երեխաները, եթե մայրը առողջ է և կրում է դալտոնիզմի գենը, իսկ հայրը հիվանդ է ըստ այդ հատկանիշի.

- 1)  $X^D X^D$ ,  $X^D X^d$ ,  $X^D Y$ ,  $X^d Y$
- 2)  $X^D X^D$ ,  $X^d X^d$ ,  $X^D Y$ ,  $X^d Y$
- 3)  $X^D X^d$ ,  $X^d Y$ ,  $X^D X^D$
- 4)  $X^D X^d$ ,  $X^d X^d$ ,  $X^D Y$ ,  $X^d Y$

32

Ինչի՞ խանգարման հետևանք է մարդու մոտ ատավիզմների ի հայտ գալը.

- 1) Փիլոգենեզի
- 2) մետաբոլիզմի
- 3) սաղմնային զարգացման
- 4) հետսաղմնային զարգացման

33

Նշված օրգանիզմներից ո՞րը չի կարող հանդիսանալ երկրորդ կարգի կոնսումենտ.

- 1) գաղձը
- 2) մարդը
- 3) սարացենիան
- 4) տիֆի հարուցիչը

34

Տեսակի ո՞ր չափանիշի հիմքում է ընկած մի տեսակի առանձնյակների կենսագործունեության գործընթացների՝ առաջին հերթին բազմացման նմանությունը.

- 1) գենետիկական
- 2) ձևաբանական
- 3) ֆիզիոլոգիական
- 4) կենսաքիմիական

35

Ի՞նչն է հանգեցնում կղզիներում ապրող միջատների անթև ձևերի առաջացմանը.

- 1) կայունացնող ընտրությունը
- 2) սեռական ընտրությունը
- 3) շարժական ընտրությունը
- 4) մեկուսացումը

36

Եկոհամակարգի ո՞ր գործառական բաղադրիչները կարող են լինել հետերոտրոֆները.

- 1) պրոդուցենտներ և ռեդուցենտներ
- 2) պրոդուցենտներ և կոնսումենտներ
- 3) կոնսումենտներ և ռեդուցենտներ
- 4) առաջին և երկրորդ կարգի պրոդուցենտներ

(37-38) Պոմիդորի պտղի կլոր ձևը դոմինանտում է տաճաճակի նկատմամբ:

Դաշտում եղած բույսերից 1440-ը ունի կլոր ձևի պտուղներ, իսկ 488-ը՝ տաճաճ։

37

Բույսերից քանի՞սն են հոմոզիզոտ, եթե դաշտում եղած բվիերը ստացվել են միևնույն ծնողական ձևերից։

- 1) 1440
- 2) 488
- 3) 960
- 4) 968

38

Բույսերից քանի՞սն են հետերոզիզոտ, եթե դաշտում եղած բվիերը ստացվել են միևնույն ծնողական ձևերից։

- 1) 1440
- 2) 488
- 3) 960
- 4) 968

(39-40) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից գոլորշիացավ 1,2 կգ  
քրտինք: 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կԶ էներգիա:

39

Քանի՞ կԶ էներգիա հեռացավ օրգանիզմից քրտինքի գոլորշիացման հետևանքով.

- 1) 2,94
- 2) 2940
- 3) 490
- 4) 2,04

40

Մոտավորապես քանի՞ օռուլ էներգիա հեռացավ մաշկի 1 սմ<sup>2</sup> մակերևույթից.

- 1) 1,47-1,96
- 2) 61-82
- 3) 147-196
- 4) 510-680

41

Ո՞ր կենդանուն (նշված է աջ սյունակում) կենսագործունեության ո՞ր առանձնահատկությունն է բնորոշ (նշված է ձախ սյունակում): Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Կենսագործունեության առանձնահատկություն

Կենդանի

- A. բեղմնավորումն արտաքին է
- B. ունեն պարանոցային մեկ ող
- C. շնչում է թոքերով և մաշկով
- D. դաստակը կազմված է չորս, իսկ թաթը՝ հինգ մատներից
- E. կերպարանափոխության ընթացքում անցնում են թոքային շնչառության
- F. սրտի փորոքն ունի ոչ լրիվ զարգացած միջնապատ
- G. ողնաշարը կազմված է պարանոցային, իրանային, սրբանային և պոչային բաժիններից
- H. մարմինը պատված է եղջերային թեփուկներով

- 1. մողես
- 2. գորտ

42

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Առանձնահատկություն**

- A. լցնում է երիկամի ավագանը
- B. առաջանում է հետադարձ ներծծման արդյունքում
- C. լցնում է նեֆրոնի պատիճը
- D. առաջանում է ֆիլտրման եղանակով
- E. օրվա ընթացքում առաջանում է 150-170լ
- F. հոսում է հավաքող խողովակով
- G. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային

**Մեզի տեսակ**

- 1. երկրորդային
- 2. առաջնային

43

Մարդու նյարդային համակարգի ո՞ր բաժնին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Առանձնահատկություն**

- A. վերահսկում է կմախքային մկանների աշխատանքը
- B. ունի հատուկ կենտրոնաձիգ զգացող ուղիներ
- C. չի ենթարկվում մարդու կամքին և գիտակցությանը
- D. կարգավորում է ներքին օրգանների աշխատանքը
- E. ենթարկվում է մարդու կամքին և գիտակցությանը
- F. նյարդաթելերը պատված են միելինային բաղանքով
- G. կենտրոնները գտնվում են գլխուղեղի որոշ բաժիններում և ողնուղեղի գորշ նյութի կողմնային եղջյուրներում

**Նյարդային  
համակարգի բաժին**

- 1. մարմնական
- 2. ինքնավար

44

Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանոնին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

### Առանձնահատկություն

- A. փոքր ու մեծ մասերի միակցմանը մասնակցում են կալցիումի իոնները
- B. մարսում են միտոքոնդրիումներ
- C. ներքջային մարադություն
- D. պոլիսախարիդների սինթեզ
- E. սարկոպլազմային ցանցի կազմավորում
- F. մասնակցություն բաժանման իլիկի առաջացմանը
- G. բնորոշ են բոլոր բջիջներին
- H. սպիտակուցի կենսասինթեզ

### Օրգանոն

- 1. լիզոսոմ
- 2. բջջային կենտրոն
- 3. հարթ էնդոպլազմային ցանց
- 4. ռիբոսոմ

45

Ի՞նչ համապատասխանություն կա տարբեր կենդանիների (նշված է ձախ սյունակում) և դրանց հետսաղմնային զարգացման ձևերի (նշված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

### Կենդանի

- A. մողես
- B. տզրուկ
- C. ականջմտուկ
- D. ծղրիդ
- E. թիթեռ
- F. մայիսյան բգեզ
- G. սարդ

### Հետսաղմնային զարգացման ձևերը

- 1. ուղղակի զարգացում
- 2. թերի կերպարանափոխությամբ զարգացում
- 3. լրիվ կերպարանափոխությամբ զարգացում

46

Ինչպիսի՞ն է լյարդի ծծանի զարգացման փուլերի հաջորդականությունը՝ սկսած հիմնական տիրոջ օրգանիզմից դուրս գալու պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թրթուրի զարգացումը լճախսունջի մարմնում
2. ցիստավորված թրթուր
3. պոչավոր թրթուր
4. թարթիչավոր թրթուր
5. ձու
6. սեռահասուն լյարդի ծծանը խոշոր եղջերավոր անասունի լյարդում

47

Ինչպիսի՞ն է մարդու տեսողական վերլուծիչում գործընթացների հաջորդականությունը սենյակի քոյլ լուսավորվածության պայմաններում:  
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բբի լայնացում
2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղևի ծոծրակային բիլք
3. ակնաբյուրեղի կորության փոփոխում
4. լույսի ճառագայթների անցում եղջերաթաղանթով
5. թարթիչավոր մարմնի մկանների կծկում
6. ցուալիկների և սրվակների գրգռում
7. տեսողական զգայության ձևավորում

48

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու շնչառության ժամանակ՝ սկսած հյուսվածքներում նյութափոխանակությունից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թոքերում օդի ճնշման բարձրացում
2. արյան մեջ ածխաթթու գազի խտության մեծացում
3. միջկողային մկանների թուլացում
4. գազափոխանակություն թոքաբշտերի օդի և մազանոթներով հոսող արյան միջև
5. թոքերի ծավալի մեծացում
6. թոքերում օդի ճնշման անկում
7. օդի ներթափանցում թոքեր
8. շնչառական կենտրոնի դրդում
9. ստոծանու մկանների կծկում

49

Ինչպիսի՞ն է մարտողության լնթացքում գործընթացների հաջորդականությունը:  
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. օրգանիզմին բնորոշ ճարպերի առաջացում
2. սպիտակուցների բնափոխում թթվային միջավայրում
3. ճարպերի թափանցում ավշային մազանոթներ
4. ածխաջրերի ճեղքում թոյլ հիմնային միջավայրում
5. ենթաստամոքսահյութի և աղիքահյութի ֆերմենտների ակտիվություն
6. ճարպաթթուների և գլիցերինի փոխազդում միաշերտ էպիթելի բջիջներում

50

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունեցել նշված փոփոխությունները էվոլյուցիայի ընթացքում: Նշել ճիշտ հերթականությունը.

1. արյան շրջանառության փակ համակարգի առաջացումը
2. նյարդային համակարգի առաջացումը
3. սեռական բազմացման առաջացումը
4. ընկերքի առաջացումը
5. կոպերի առաջացումը

51

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում սպերմատոզենեզի գործընթացները: Նշել ճիշտ հերթականությունը.

1. կոնյուգացիա և տրամախաչում
2. սպերմատիդների առաջացում
3. կրկնակի քրոմատիդներից կազմված քրոմոսոմների հասլուի հավաքակազմով բջիջների առաջացում
4. դիպլոիդ բջիջների բաժանում՝ միտոզով և սկզբնական սեռական բջիջների թվի ավելացում
5. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
6. սպերմատոզուիդների ձևավորում
7. բջիջների աճ, ԴՆԹ-ի կրկնապատկում

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ձկների առջևի ուղեղից դուրս են գալիս աչքը շարժող նյարդերը
2. ինֆուզորիայի օրգանիզմից ջրի ավելցուկը դուրս է բերվում կծկուն վակուոլի միջոցով
3. անձրևորդերի արտաթորության համակարգը ներկայացված է յուրաքանչյուր հատվածում տեղադրված զույգ ձագարածն խողովակներով, որոնք դեպի դուրս բացվում են նեղ անցքերով
4. մողեսի կողոսկրերի առաջին հինգ զույգը փորային կողմում միաձուլվում են կրծոսկրին
5. եգիպտացորենի սերմի հիմնական պաշարանյութերը գտնվում են շաքիլներում
6. բոչունների ձախ փորոքից դուրս է գալիս առրտայի աջ աղեղը

## Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. մակերիկամներում արտադրվում է նորադրենալին հորմոնը, որը բարձրացնում է արյան ճնշումը
2. անդաստակային օրգանում տեղակայված է մազիկավոր քջիջներից կազմված կորտյան օրգանը
3. նախասինապսային թաղանթը աքտոնի վերջավորության թաղանթն է
4. սիմպաթիկ նյարդերով հաղորդվող նյարդային ազդակները հանգեցնում են ուղեղի անորոշերի լայնացմանը
5. միջին ուղեղում տեղակայված կենտրոնները կարգավորում են քրի մեծությունը, ակնաբյուրեղի կորությունը
6. միզարձակման կենտրոնը տեղակայված է ողնուղեղի կրծքային բաժնում
7. գլխուղեղի նեյրոնների մարմիններն առաջացնում են սպիտակ նյութ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. պլազմալեմի լիպիդային երկշերտում լիպիդների ճարպաթթվային «պոչիկներն» ուղղված են դեպի ներքին հատված, իսկ լիպիդների «զլսիկները»՝ դեպի արտաքին կողմերը
2. վարսանդի սպիթի վրա փոշեհատիկը ծլում է և առաջացնում սերմնասկզբնակ, որում ձևավորվում են ութ քջիջներ
3. ֆոտոսինթեզի լուսային փուլում թթվածինն առաջանում է ջրի ֆոտոլիզի հետևանքով
4. կապտականաչ ջրիմունները պարունակում են քլորոֆլաստներ, որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի անջատումով
5. ֆուֆոլիպիդների ոչ ճարպաթթվային մասերում հանդիպում են լիցքեր կրող տարբեր կողմնային խմբեր և այս լիպիդները քջաթաղանթներում կատարում են կառուցողական ֆունկցիա
6. ԴՆԹ-ի կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդները իրենց կառուցվածքով և կազմով տարբերվում են Ո-ՆԹ-ների կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդներից
7. կորիզաթաղանթի ներքին թաղանթը պատված է ոիբոսումներով և Գոլջիի ապարատի և էնդոպլազմային ցանցի խողովակների հետ առաջացնում է ընդհանուր համակարգ

## **Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. մեղուզան, սրատուտը, լճախխունջը, ինֆուզորիան, պոլիա հիդրան եռաշերտ օրգանիզմներ են
2. դրոզոֆիլի աչքի գույնն առևտոստային հատկանիշ է, և այն պայմանավորող գենը գտնվում է Y քրոմոսոմում
3. բրախիդակտիլիան պայմանավորված է գենոտիպում մեկ դոմինանտ գենի առկայությամբ, որը պայմանավորում է կմախքի զարգացման խանգարումներ և դոմինանտ հոմոզիգոտների մոտ հանգեցնում է մահվան
4. սիմետրիկ տրանսլոկացիայի ժամանակ մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը կարող է միանալ մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չունեցող հատվածին
5. թռչունները, սողունները և որոշ պոչավոր երկկենցաղներ օժտված են արական հետերոգամետությամբ
6. որքան լայն է հատկանիշի ռեակցիայի նորման, այնքան մեծ են շրջակա միջավայրին հարմարվելու օրգանիզմի հնարավորությունները

## **Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. լրիվ դոմինանտության դեպքում երկիետերոզիզոտ գույգերի խաչասերումից ստացված սերնդում ճեղքավորումն ըստ Գենոտիպի 1:2:1 հարաբերությամբ է
2. պլեյոտրոպիան հետերոզիզոտ առանձնյակում տարբեր ոչ ալելային գույգերի երկու գենների գործունեության հետևանքով հատկանիշի դրսնորման երևույթն է
3. էպիստազ առաջացնող գեններին անվանում են արգելակիշ գեններ
4. պոլիմերիայի օրինակ է այն երևույթը, երբ ոլորի կարմիր ծաղիկներ պայմանավորող գենը որոշում է նաև կարմրավուն ցողունի առաջացումը
5. բնական ընտրությունն ուղղորդված բնույթ ունի
6. ինֆուզորիաները բազմանում են սպորներով և կոնյուգացիայի եղանակով

57

## Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ քոլոր սխալ պնդումները.

1. մարդու արյան խումբը պայմանավորում են A և B ազյուտինոգենները և ռեզուս գործոնը
2. ավիշը բաղադրությանք նման է արյան պլազմային, միայն ավիշում սպիտակուցների քանակը 3-4 անգամ պակաս է
3. թոքային թոքամզային բաղանթը պատում է կրծքավանդակի պատը ներսից և կազմված է էպիֆելային հյուսվածքից
4. սիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ ուժեղանում է ջրի հետադարձ ներծծումը և մեզը պակասում է
5. բարակ աղու բաժիններն են՝ տասներկումատնյա աղին, բարակ աղի, կույր աղի
6. թոքային երակներով հոսում է զարկերակային արյուն

58

## Նշել քոլոր սխալ պնդումները.

1. քարածուխը, կրային ապարները կենսածին նյութեր են կարապուսի և հոլոսուրիայի փոխագրեցությունը կոռապերացիայի օրինակ է
2. կույր օձերի և վիշապների վերջույթների մնացորդները ատավիզմներ են
3. կոնվերգենցիայի օրինակ է կետանմանների և բիոտանիների թիանման վերջույթներ ձեռք բերումը
4. օդը վատ ջերմահաղորդիչ է, ինչը դժվարացնում է օրգանիզմում առաջացող ջերմության պահպանումը
5. օրգանիզմներն իրենցից ներկայացնում են բաց կենսաբանական համակարգեր

59

Գլյուկոզի ճեղքման անթրվածին փուլում անջատված ջերմային էներգիայի 20 %-ը՝ 588 կՋ, հեռացվել է օրգանիզմից գոլորշիացման միջոցով: Որոշել ամրող պրոցեսի օգտակար գործողության գործակիցը (%-ով), եթե հայտնի է, որ ամրող պրոցեսի արդյունքում առաջացել է 672 մոլ  $H_2O$ : Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կՋ էներգիա: Պատասխանում ստորագրելուց հետո պահպանել մեկ թիվ և պատասխանը բազմապատճել 10-ով:

60

Ֆոտոսինթեզի պրոցեսում բազմամյա մեկ ժառը 30 օրվա ընթացքում (16-ժամյա լուսային օր) արտադրել է 25088 լ քրվածին: 1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ: Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը ( $m^2$ ):

- (61-62) Եկոհամակարգ մտնող էներգիայի միակ աղբյուրն Արեգակնային լույսն է, որի գումարային էներգիան մեկ տարվա ընթացքում կազմում է  $1,6 \cdot 10^8$  կՎ:  
Ֆուսոսինթեզի օգտակար գործողության գործակիցը հավասար է 1,2%:  
Եկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝  
բույսեր - բուսակեր կենդանիներ - գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ:

61

Զանի<sup>o</sup> մակարույժ կարող է սմվել տվյալ համակեցուրյան գիշատիչների հաշվին,  
եթե մեկ մակարույժի զանգվածը 1 գ է, իսկ մակարույժների 1 կգ գումարային  
զանգվածում պարունակում է  $4 \cdot 10^4$  կՎ էներգիա: Ընդունել, որ յուրաքանչյուր  
մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 10%-ը:

62

Որոշել էներգիայի կորուստը (կՎ) սննդան շղթայի գիշատիչներ - գիշատիչների  
մակարույժներ օղակում:

(63-65)  $2,7054 \cdot 10^{-12}$  գ զանգվածով բակտերիայի բջջում պարունակվում է 15000 ռիբոսոմ, որոնց ընդհանուր զանգվածը կազմում է բակտերիայի զանգվածի 3 %-ը:

63

Զանի<sup>o</sup> դալտոն է կազմում մեկ ռիբոսոմի միջին զանգվածը: Հաշվի առնել, որ 1 դալտոնը հավասար է  $1,67 \cdot 10^{-24}$  գ: Պատասխանը բաժանել 1000-ի:

64

Սպիտակուցի քանի<sup>o</sup> մոլեկուլ կա մեկ ռիբոսոմում, եթե սպիտակուցի միջին մոլեկուլային զանգվածը 30000 դալտոն է և սպիտակուցների ընդհանուր զանգվածը կազմում է ռիբոսոմի զանգվածի 50%-ը:

65

Զանի<sup>o</sup> նուկլեոտիդից է բաղկացած ռիբոսոմի սպիտակուցը կոդավորող գենը, եթե մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 120 դալտոն է:

(66-68) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու զիսուղեղը օրվա ընթացքում ստացել է 1137,24 լ արյուն: Ֆիզիկական աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,6 անգամ, օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալն աճել է 25%-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 1,8, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝ 1,2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում, սրտի բռնորաշրջանի տևողությունը 0,8 վրկ է, մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 65 մլ արյուն և զիսուղեղը ստանում է արյան շրջանառության մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը:

66

Չանի<sup>o</sup> ժամ է տևել ֆիզիկական աշխատանքը:

67

Մեկ օրվա ընթացքում քանի<sup>o</sup> լիտր քրվածին է օգտագործվել օրգանիզմում, եթե մարդը մեկ օրվա ընթացքում քնած է եղել 7 ժամ:

68

Ֆիզիկական աշխատանք կատարելու ընթացքում քանի<sup>o</sup> լիտր քրվածին է ստացել երիկամը, եթե երիկամներ է հասնում առրտա մղված արյան ծավալի 20%-ը:  
Պատասխանը քազմապատկել 10-ով:

**Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. դելտայաձև մկանը տեղակայված է բազկային հողի վերևում
2. արտաքին միջկողային մկաններն իրականացնում են արտաշնչումը
3. աջ և ձախ կրծոսկրաանրակապտկաձև մկանների հաջորդական կծկման դեպքում նրանք հանդես են գալիս որպես սիներգիստներ և գլուխը թեքվում է աջ-ձախ
4. պարանոցային առաջին ողջ ունի մարմին և երկու հոդաելուստներ, որոնց վրա հենվում է գանգը
5. կողոսկրերը ողերին միացած են անշարժ միացմամբ
6. վեզը ոտնաթաքի խոշոր ուլունքից է

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. կորիզավոր բջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն թթվածնի բավարար քանակության պայմաններում ենթարկվում է հետազա ճեղքման, որի արդյունքում առաջանում է ացետիլ-կոֆերմենտ A և հետո անցնում է միտոքոնուլիտումներ
2. ֆոտոսինթեզի մթնային փուլի ռեակցիաներին մասնակցող ռիբոլոզարիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտները գտնվում են հիմնականում թլորոպալաստների ստրոմայում
3. գլյուկոզի ճեղքավորման թթվածնային փուլում  $\text{NADH}_2$ -ի և  $\text{FADH}_2$ -ի պրոտոնների և էլեկտրոնների վերջնական ակցեպտորը մոլեկուլային թթվածինն է
4. օքսիդային ֆոսֆորիլացումը միտոքոնուլիտումներում ածխաջրերի, ճարպերի օքսիդացման արդյունքում առաջացած էներգիայի հաշվին ԱԵՖ-ի սինթեզն է
5. ջրի հետ փոխազդեցության արդյունքում ԱԵՖ-ում ածխաջրի և ֆոսֆորական թթվի միջև առկա կապը ճեղքվում է, և ԱԵՖ-ը ձևափոխվում է ԱԿՖ-ի
6. ԱԵՖ-ի կազմության մեջ մտնում են աղենինային ազոտական հիմքի մնացորդը, դեղօքսիդիրոգ ածխաջուրը և ֆոսֆորական թթվի երեք մնացորդ